

Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Գինը 100 դրամ:

ՆԱԲԱԾ 16 ՆՈՒՄԵՐՆԵՐԻ 2013Թ. • № 31 (304)

**Չնչին, ինչպես Արարարին
Ներած քար՝
Դավերը սեւ մարդուկների
այդ անկար -
Օ՛, չհասած քղանցքների
անգամ քո՝
Վայր են թափվում...
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ**



Հեղաձուլվել է «Թշվառականը» հողվածի դատաքննությունը

ԱԿՏԻՎ՝ ԸՆԴՈՒՄ ԽՈՍԵԻ
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ

Ինչպես արդեն տեղեկացրել ենք՝ Կապան քաղաքի բնակիչ Գագիկ Ղահրամանյանը կարծում է (ենթադրում է), որ Սամվել Ալեքսանյանի հեղինակած «Թշվառականը» հողվածն իր մասին է, ինչի համար եւ դատական հայց է ներկայացրել ընդդեմ թերթի խմբագրի՝ պահանջելով նաեւ 3 մլն դրամի նյութական փոխհատուցում:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում 2013թ. նոյեմբերի 12-ին, ժամը 12.00-ին, ըստ դատարանի ծանուցագրի, պետք է մեկնարկեր հայցադիմումի քննությունը: Նշանակված ժամից 10 րոպե առաջ, երբ պատասխանող Սամվել Ալեքսանյանը խմբագրության աշխատակիցների հետ արդեն դատարանի շենքում էր, դատավոր Անահիտ Թումանյանի օգնականն իրազեկեց պատասխանողին, որ դատավորի բացակայության պատճառով (գործուղման մեջ է գտնվում) դատական նիստը հետաձգվում է, իսկ նախնական դատական նիստի նոր ժամկետի մասին պատասխանող կողմը կիրառվի:

Իսկ թե ինչու է պատասխանող կողմը դատական նիստի հետաձգման մասին իրազեկվել նշանակված ժամից մի քանի րոպե առաջ՝ դատավորի օգնականը պատճառաբանեց, որ Սամվել Ալեքսանյանի հեռախոսահամարն իրենց հայտնի չի եղել:

Նշված ժամից րոպեներ առաջ դատարան չէին ժամանել հայցվորն ու նրա փաստաբանը՝ հավանաբար նախապես տեղյակ լինելով դատական նիստի հետաձգման մասին: Եվ, որ ուշագրավ է, դատարանի մուտքի հերթապահը, ում մոտ առկա էր տվյալ օրվա դատական նիստերի ժամանակացույցը, տեղյակ չէր դատական նիստի հետաձգման մասին ու հորդորեց սպասել մեկերկու րոպե, որից հետո կգան եւ մեզ կուղեկցեն դատական նիստերի դահլիճ: Բայց քիչ անց հեռախոսի մոտ հրավիրվեց պատասխանողը եւ տեղեկացվեց դատական նիստի հետաձգման մասին:

Ի դեպ, ս.թ. նոյեմբերի 8-ին պատասխանող Սամվել Ալեքսանյանը հայցադիմումի վերաբերյալ իր առարկություններն էր ուղարկել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանին եւ հայցվորին՝ առաջարկելով ամբողջությամբ մերժել Գագիկ Ղահրամանյանի հայցը (Ս.Ալեքսանյանի պատասխան խոսքը (առարկությունները) «Սյունյաց երկրում» կհրատարակվի առաջիկայում):

Ավելի վաղ՝ հոկտեմբերի 21-ին Սամվել Ալեքսանյանը միջնորդագիր էր ներկայացրել դատարան՝ խնդրելով հայցադիմումի պատասխանելու երկշաբաթյա ժամկետին հավելել եւս երկու շաբաթ, ինչը բավարարվել էր:

Ավաճի՞ն ավելացնենք. Սամվել Ալեքսանյանը չի օգտվի փաստաբանական ծառայությունից եւ ինքն էլ կպաշտպանի իր շահերը: Գագիկ Ղահրամանյանի փաստաբանական ծառայություն կմատուցի ՀՀ փաստաբանների պալատի անդամ Էդգար Յովհաննիսյանը:

Սիսիանի վոլեյբոլիստուհիները՝ Հայաստանի չեմպիոն

ՍՊՈՐՏ

Ավարտվեց վոլեյբոլի Հայաստանի առաջնությունը, որն անցկացվում է գարուն-աշուն մրցակարգով: Այս անգամ եւս Սիսիանի մարզպետի «Սյունիք» կանանց թիմը (մարզիչ՝ ՀՀ ֆիզկուլտուրայի վաստակավոր աշխատող Աղվան Հակոբյան) վերելքով է անցկացրել առաջ-

նությունը՝ չորրորդ անգամ անընդմեջ դառնալով հաղթող: Թիմի անդամները պարգևատրվել են ոսկե մեդալներով եւ դիպլոմներով: Իրենց լավագույն կողմերով դրսևորած խաղացողներն արժանացել են անհատական մրցանակների. Մարիա Յովհաննիսյանը (լավագույն խաղացող), Նարե Յովհաննիսյանը (լավագույն ունիվերսալ խաղացող), Սոնա Սաղոյանը (ամենաերիտասարդ լավագույն խաղացող): Սիսիանի վոլեյ-

բոլիստուհիները բացարձակ առավելությամբ հաղթել են մրցակիցներին, իսկ եզրափակիչ խաղում՝ Երևանի «Գարեգին Նժդեհ» թիմին: Այժմ սիսիանցիները նախապատրաստվում են ղեկավարվել մասնակցելու հանրապետության վոլեյբոլի ֆեդերացիայի գավաթի խաղարկությանը, իսկ հետո՝ հանրապետության հերթական առաջնությանը:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

Մարզկենտրոնում՝ շարիաթի օրենքով

Պաշտոնավարման 10-րդ օրը Սյունիքի նոր մարզպետը գործարկեց իր հերթական ձեռնարկությունը՝ այս անգամ՝ մարզկենտրոն Կապանում եւ պարսիկների հետ ու շարիաթի օրենքով

ՆՈՐ ԱՐԾԵՅԱՄԱԿԱՐԳ

Հազվերտ 2-րդ Սասանյանը, պարզվում է, 450թ. այնքան էլ մեծ բան չէր ուզում հայերից, երբ հարցը դիտարկում ենք մերօրյա Հայաստանում ներդրվող արժեհամակարգի տեսակետից: Պարսից արքան ընդամենն ասում էր՝ թողնեք մեր մոզերը գան եւ Հայաստանում ներդրեն պարսից ծիսական կարգը, հայերի մեջ քարոզեն պարսից դավանանքը: Փոխարենը խոստանում էր հարկերի նվազեցում Հայաստանում, մարդկանց ավելի լավ ապրելու հնարավորության ընձեռում, բնակչության անվտանգության ապահովում, նախարարների գավազներին (եթե անգամ այդ գավազները տկարամիտ են ու անբան եւ չեն կարողանում առավտները ժամանակին քնից արթնանալ) Տիգրանում պաշտոնի նշանակում... Հայ նախարարների հիմնական մասը եւ Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչները, սակայն, գերադասեցին մեռնել, քան թույ-

լատրել պարսիկ մոզերի մուտքը Հայաստան: Եվ գնացին ու իրենց առաջնորդ կարգած Վարդանի հետ (Մամիկոնյան տոհմից) զոհվեցին (ավելի ճիշտ՝ նահատակվեցին) Տղմուտ գետի ափին, որ Ավարայր է կոչվում: Նահատակվեցին ու չթողեցին, որ պարսից հոգեւոր կարգը ներդրվի հայոց մեջ... Բայց արքան ու իր փորձառու Նյուսալավուրտ զորավարը, կարծեք, այնքան էլ հեռատես ու խոհեմ չգտնվեցին, երբ ճակատամարտի ելան իրենց հավատի ու ավանդույթների պաշտպանության համար զենքի դիմած հայոց ավագանու ղեմ: Նրանց մտքով չէր անցել, որ օրերից մի օր հայոց արեւելյան կողմում՝ Սյունիք կան Սիսիան անվանյալ, օրվա իշխանավորները, հանուն անձնական շահի, կամավորապես կկիրառեն պարսից ծիսական կարգը...

Իհարկե, հիմա Պարսկաստանում զրադաշտականությունը չէ, որ դավանում են: Մահմեդի մահից հետո այնտեղ իշխող դարձավ եւ մինչեւ հիմա իշխում է շիիզմը, որի հետեւորդներն ու-



Մաքսիմ Հակոբյան, «ԶՊՄԿ» ՓԲԸ գլխավոր

ենն իրենց սրբազան ավանդույթները՝ ինչ-որ չափով ամփոփված Շարիաթ կոչվող սրբազան ժողովածուում: Եվ ըստ այդ գրքի՝ որեւէ սպանում (անասուն մորթելու վայր) պետք է օժտված լինի մոլլայի (մահմեդական կրոնավորի) կողմից, որպեսզի մորթված անասունի միսը համարվի «հալալ» եւ օգտագործվի, այլապես այդ մսի պարանջային գինն էականորեն կնվազի:

Շարունակությունը՝ էջ 2

2013 թվականի ձմեռային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ
Ղեկավարվելով «Զինապարտու-

թյան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածներով՝ որոշում են.
1. 2013 թվականի դեկտեմբեր - 2014 թվականի հունվար ամիսներին անցկացնել Հայաստանի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների պարտադիր ժամկետային և այլընտրանքային ծառայությունների ծնեռային զորակոչը, որոնց 18 տարին լրանում է մինչև 2013

թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնց պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նախկինում տրված տարկետումը դադարում է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
2. 2013 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին զորացրել սահմանված ժամկետում պարտադիր զինվորական ծառայություն անցած զինծառայողներին:
3. Հայաստանի Հանրապետության

կառավարությանը՝ սույն հրամանագրի ուժի մեջ մտնելուց հետո երկաթաբայա ժամկետում ընդունել հրամանագրի կիրարկումն ապահովող համապատասխան որոշում:
4. Սույն հրամանագրի ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ Ս.ՍԱՐԳՍՅԱՆ
2013թ. նոյեմբերի 6, Երևան, ԼՂ-283-Ն
president.am

լուրեր

Ս.Ս. նոյեմբերի 11-13-ը կապանում տեղի ունեցավ Սյունիքի մարզի ներդրումային համաժողով, որի ընթացքում ներկայացվել են մարզի ներդրումային հնարավորությունները՝ մասնավոր ներդրողների և ՀՀ-ում դրսևորների կողմից ֆինանսավորվող նախագծերի համար: Համաժողովը կազմակերպվել էր Սյունիքի մարզում ԵԱՀԿ ծրագրերի իրականացման գրասենյակի և Սյունիքի մարզպետարանի կողմից՝ համագործակցությամբ «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության, «Շուկաներ Մերոյի համար» ծրագրերի և մարզի քաղաքապետարանների: Համաժողովի մասին հաջորդ համարում:

Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միավորման ս.թ. հոկտեմբերի 26-27-ին տեղի ունեցած համագումարում այդ միավորման նախագահ է ընտրվել Արամ Սաթյանը: «Սյունյաց երկիրը» շնորհավորում է Արամ Սաթյանին և նրան հաջողություններ ցանկանում:

Նոյեմբերի 10-ը՝ Տեղական ինքնակառավարման օրը, ուշագրավ միջոցառմանը Ազարակ Ազարակ քաղաքում: Քաղաքապետարանի աշխատակիցների, քաղաքապետարանի ենթակա կառույցների ղեկավարների, համայնքի ավագանու անդամների և քաղաքապետարանի վետերանների մասնակցությամբ տեղի ունեցած երևույթի նախաձեռնող ներկայացվեց տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը Ազարակում՝ 1996 թվականից ի վեր: Այնուհետև մասնագիտական տոնի առթիվ ներկայացվեց շնորհավորեց ու բարեմաղթանք հղեց քաղաքապետ Սյուիթար Ջաբարյանը: Շնորհավորական խոսքով հանդես եկան նաև տեղական ինքնակառավարման ոլորտի ազարակցի վետերանները: Երեկոն ուղեկցվում էր քաղաքապետարանի աշխատակիցների գեղարվեստական ելույթներով, ստեղծագործություններով ու ներկայացումներով: Սյունիքյան և ազարակյան թեմաներով երգերի կատարմամբ միջոցառմանը մասնակցում էր Մեղրի-Ազարակում ծանաչում ունեցող «Մեղրածոր» երաժշտական համույթը: Ամբողջ հարապետությունում լեռնահանքային արդյունաբերությանը ծանաչված քաղաքը, ինչպես ցույց տվեց երեկոն, նախաձեռնող հոգեւոր-մշակութային միջավայր է, ինչն էլ, ըստ էության, Ազարակի քաղաքապետարանի վերջին տարիների գործունեության տեսանկյունից արդյունքներից մեկն է:

ՌՈՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ. «Միջին-մասնագիտական կրթական համակարգն առհասարակ անարժան է մեր օրերում»

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

Կապանի բժշկական քոլեջը նոյեմբերի 1-ից անցել է հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ: Այդ և կրթօջախին առնչվող այլ խնդիրների մասին զրույց ունեցանք քոլեջի փոփոխության Ռոմիկ Սարգսյանի հետ: Բայց քանի որ նա 2002-2008թթ. նաև ղեկավարել է Հայաստանի հանրապետական կուսակցության Կապանի տարածքային կազմակերպությունը, մեր զրույցի երկրորդ հարվածում շոշափվեցին Կապանի ներքաղաքական իրավիճակին վերաբերող հարցեր՝ մեծամասամբ Հանրապետական կուսակցությանն առնչվող:

— Պարոն Սարգսյան, առաջինը, ինչը մեզ հետաքրքրում է, այն է, որ Ձեր ղեկավարած ուսումնական հաստատության կարգավիճակի փոփոխությունն է եղել: Կուզենայինք, նախաձեռնող, իմանալ այդ մասին:
— Նախ՝ շնորհակալություն կրթօջախի գործունեությանը հետաքրքրվելու համար: Որքանով ծանոթ եմ հանրապետության լրատվական դաշտին (ըստ իս՝ վատ չեմ ծանոթ), «Սյունյաց երկիրը» չվարձույն մարզային թերթն է՝ իրադարձությունների մեկնաբանմամբ և նյութը մատուցելու տեսակետից, սո-

ցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային իրադարձություններին անդրադառնալու առումով: Սա՝ ամենայն անկեղծությամբ: Լինում են սուր իրապարակումներ՝ անկախ այն բանից, թե ում քիմքին է հարմար, ում ոչ:
Իսկ հիմա ներկայացնեմ պետական բժշկական քոլեջների աշխարհագրությունը: Դրանցից երկուական գործում է մայրաքաղաքում և Գեղարքունիքում, մեկական՝ Գյումրիում, Վանաձորում, Արմավիրում, Դիլիջանում, մայրաքաղաքից հարավ ընկած մարզերում՝ Արարատում և Սյունիքում՝ Կապանում: Բժշկական քոլեջները միջին-մասնագիտական միակ հաստատություններն էին, որոնց լիազոր մարմինը ոչ թե կրթության և գիտության նախարարությունն էր, այլ առողջապահության: ՀՀ վարչապետի որոշմամբ դրանք հունվարի 1-ից վերակազմավորվում են, և բժշկական քոլեջների լիազոր մարմինը լինելու է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: Կապանի պետական բժշկական քոլեջն իր նմանների մեջ առաջինն է, որտեղ վերակազմավորման գործընթացն ավարտին է հասցված, և արդեն մեր տնօրինության ներքո են հիմնադիր փաստաթղթերը՝ պետեզիտությունը գրանցված կանոնադրությունը, նոր վկայականի ներդիրը: Իրողությունն այն է, որ այսուհետև Կապանի բժշկական քոլեջի կառա-



վարման լիազոր մարմինը լինելու է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
— Որքանով հասկացանք, քոլեջի ոչ թե կարգավիճակն է փոխվել, այլ վերակազմակերպվել է և ենթակայությունն է փոխվել: Այդպե՞ս է:
— Միանգամայն, բայց այդ ամենը, ըստ էության, ենթադրում է հետագա փոփոխություններ:
Մի կողմից դրականն այն է, որ մեր լիազոր մարմինը լինելու է կրթությանն առնչվող բարձրա-

գույն մարմինը, այն է՝ կրթության և գիտության նախարարությունը: Առողջապահության նախարարության ենթակայության ներքո լինելը դրական էր այն առումով, որ առողջապահական հիմնարկների հետ խնդիրներ չէին ծագում սովորողների ուսումնառատագրական պրակտիկայի կազմակերպման տեսակետից: Բայց այժմ էլ չեն կարծում, որ խնդիրներ կծագեն, քանի որ միջին-մասնագիտական կրթությամբ կա-

Սարգկենտրոնում շարիաթի օրենքով

ՆՈՐ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ

Սարգկենտրոնում շարիաթի օրենքով... Եվ Իրանի Իսլամական Հանրապետությունից բերեց մի մոլլա (այդ մասին վկայում են նաև մայրաքաղաքային մի շարք լրատվամիջոցներ), ով էլ այս տարվա հուլիսի 20-ին օժեց Կապանում գործարկվող սպանդանոցը (մանր եղջերավոր ամասունների մորթման ու վերամշակման արտադրամասը):
Սյունիքում արդիական սարքավորումներով սպանդանոց ունենալը, անշուշտ, դրական երևույթ է: Դրական է նաև իրողությունը, որ հարեան Պարսկաստանից եկել և ներդրում են արել Կապանում: Բայց... հնարավոր չէ՞ր այդ լավ նախաձեռնությունը կյանքի կոչել առանց պարսկական ծիսակարգի:
Այդ հարցին Սյունիքի օրվա կառավարիչ Մաքսիմ Հակոբյանն արդեն իսկ տվել է իր որոշիչ պատասխանը՝ այո, արժե:
Իսկ ի՞նչ են մտածում Մայր աթոռում և մասնավորապես Սյունիքի

թեմում:
Ամենահետաքրքիրն այն է, որ Սյունիքում այլևս ոչնչից չեն զարմանում: Չեն զարմանում նույնիսկ, որ Հայաստանի մերօրյա վարիչները, վերջին ամիսներին Սյունիք ժամանելիս, այցելեցին այդ սպանդանոցի փաստորեն հավանություն տվեցին սպանդանոցի գործարկման կերպին:
Ի դեպ, Կապանում շրջանառվում է խոսակցություն, որ մահմեդական հոգեւորականը մշտապես պետք է մնա մարզկենտրոնում և քրիստոնեական միջավայրում դուրանյան ընթերցումներով օժի մանր եղջերավորների ամեն մի խմբաքանակի մորթը, այլապես Մաքսիմ Հակոբյանի մաքիների միջոց կզրկվի «հալալ» ապրանքանիշից և այդ մարդու եկամուտներն էականորեն կպակասեն:
Հիշեցնեմ՝ շարիաթի օրենքով կապանյան սպանդանոցի օժման հանդիսավոր արարողությանը մաս-

նակցում էր Սյունիքի մարզպետը (ի դեպ, նա չի մասնակցել մարզկենտրոնի տոնին, չի մասնակցել Գորիսի Սբ Հռիփսիմեի վերածննդին ու Գորիսի տոնին, չի մասնակցել Սիսիանում կազմակերպված համաժողովորական մի քանի տոնակատարությունների, բայց եկել էր սպանդանոցի օժմանը): Եվ մասնակցում էր երկու կարգավիճակով՝ եւ որպես մարզպետ, եւ որպես սպանդանոցի համասեփականատեր: Այո՛, «Գյուղարտ» անունը կրող այդ ընկերության 50%-ի սեփականատերը «Լամաքս գրուպ» ՍՊԸ-ն է, որը, ըստ մայրաքաղաքային մամուլի հրապարակումների, Վահե Հակոբյանի սեփականությունն է (սպանդանոցի մյուս 50%-ի բաժնետերը «Շահիր ինվեստ» պարսկական ընկերությունն է): «Գյուղարտի» կառուցման համար ծախսվել է 550 մլն դրամ (մի մասը՝ շինարարության, մյուս մասը՝ սարքավորումներ ձեռք բերելու համար):
...Մի ուրաքցե՛ք և մի ասե՛ք, թե դա արվում է համուն Սյունիքի, այն Սյունիքի, որ մի քանի հոգու համար այլևս ալպիական մարզագետին է:
ՍՍՍԿԵԼ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ

êÙàòÛ°ðÆÛ°ðÛ ²ðï°ðï ðàòø

Գործիսյան պատում. հատվածներ

Շար փորհներ են անցել այն օրից, երբ Գործիսի N2 միջնակարգը, իսկ ավելի ճիշտ՝ Օհանյանի դպրոցը, ավարտելուց հետո լքեցի սիրելի Գործիսը՝ Սյունյաց աշխարհի այդ մարզարիք քաղաքը, որի մոգական հմայքը չկարողացան դժգունացնել ո՛չ ինձ ծնունդ փված քաղաքից հեռու ապրած փորհների կուրակը, ո՛չ կիլոմետրերը, ո՛չ էլ օդար քաղաքակրթություններում գտնվելու: Վերջերս՝ որոշ ժամանակով դարձրեցի լավ թարգմանչական աշխատանքս, ներքին մի պահանջով որոշեցի հասուն մարդու իմ մարդուններն ու հիշողությունները թողնել հանձնել: Այդ կերպ մտածելով՝ սկսեցի հետապնդել մյուս Գործիս քաղաքի, նրա բնակիչների, իմ մանկական ու աղջկական աշխարհի հենքը կազմող մարդկանց մասին յուրօրինակ աշխարհընկալմամբ իմ պատումը: Եվ ընթերցողի ուշադրությանն են ներկայացնում այդ պատումից մի քանի հատված:

Կորուսյալ աշխարհ

Տիեզերքի մի հյուսիս, երկրագնդի մի կետ, կիկլոսյան ժայռերի՝ հրաշագեղ մայակով կուրծքը զարդարած սարերի մեջ շշկված, հարկար ու մի գաղտնիք ու պատմություն պահած, վառվռում ու խենթ մարդկանց վարքը պարտական այդ քաղաքը շարունակ հետս է, միշտ իմ մեջ:

Գործիս... Քաղաքը, որ դրոշմվել է իմ մանկական ուղեգրում, աղջկական հիվանդագին տպավորության վերածվել, դարձել հասուն մարդու ցնորք, այդ քաղաքն արդեն չկա: Չկա այնքանով, որքանով չկա ժամանակը, որ ցավագին հուշ է դարձել, կորսված հայրենիքի, տանու տված պատմության, քանդված հուշարձանների եւ բազում հետաքրքիր ու վառ ճակատագրերի հուշ... Ես հաճախ եմ մտածում այդ ցնորքի մասին, ուզում եմ միս ու արյուն տալ նրան, խոսեցնել... Միտքս թթմորի պես բարձրանում է, բորբոքում ուղեղս: Հիշողությունները, լավայի հրեղեն լեզու դարձած, հոսում են, տարածվում, դառնում շքեղաշուք ժայռեր, Գործիս-գյուղ, բազալտե ճարտարապետություն, խստակյաց նիստուկաց, լայն հրապարակի վրա կախված զարդաբանական պատշգամբներ եւ շենքերի հետեւում քողարկված մի մե՛ծ, վիթխարի, համեմայն դեպս կիրոված տարիների գազաթից այդպիսին թվացող մի բակ, քաղաքի ամենանշանավոր բակը, որտեղ բազում կյանքի ուղիներ են հատվել, ճակատագրեր բախվել, բնավորություններ թրծվել... Այդ՝ թրծվել, քանզի այդ բակը կյանքի ու կենցաղի մի իսկական քուրա էր, որում անցած ու մոռացված տարիներում ծնվել ու մեծացել ենք ես ու շատ-շատերը:

Չարձանալի բան է ժամանակը, նա մի կախարհանքով այդ քուրան վերածում է աստվածաշնչային եղեմի, որում, թե չլինեք տարիների կուտակը, ես այնպե՛ս ապահով կզգայի ինձ՝ վերստին մանկացած... Ես քանդում եմ մտքիս կծիկը, թելը ձգվում է տասնամյակների ոլորապտույտ խորքերը, հասնում իմ այն խենթուկուրակ ու սիրելի քաղաքի կենտրոնը, մթին թունելի, բայց վերջում լույսը

երեւացող թունելի պես երկար մուտքով հայտնվում մի մեծ ու արմկոտ աշխարհում, որ կարծես մի վիթխարի խլիխլաթ կաթսա լինեք: Օդն այնտեղ առավոտ ծեփից միմյուս ուշ երեկո հագեցած էր լինում երեխաների ճիչ-աղաղակով, մեծահասակների կանչով ու կշտամբանքներով: Հետո դրանք սովորաբար վերածվում էին թունդ անեծքների ու հայտնաբերում, որին մեր՝ երեխաներիս, ականջները սովոր էին ի բնե, քանզի բազալտե այդ խստիվ աշխարհում թե՛ սերն ու փայփայանքը եւ թե՛ չսիրելն անպատճառ թունդ խոսքի հնչողություն էին ունենում: Երեխայի ժիր վարքով ջերմացած մայրը կասեր. «Վու՛յ, թաղեմ քեզ, ա՛յ սատանի ճուտ», իսկ թռուռուհուն սիրող ու դասը սերտելու կանչող տատը բոլորովին էլ չէր քաշվի նզովել. «Ախ՛ջ, ա՛յ մարդամե՛ռ, դասերիդ կաց...», ամենեւին էլ միտք չունենալով չարագուշակորեն կանխատեսել իր թռան՝ հորիզոնում նույնիսկ դեռեւ չչմարվող ամուսնու վախճանը:

Կալեյդոսկոպ

Չի կարելի կարծել, թե Կլավա-Կլավդիա, Ղուսյա-Եվդոկիա անունները տարաշխարհիկ էին Գործիսում: Ո՛չ, քաղաքի բնակիչները միանգամայն բարյացակամորեն, նույնիսկ մի առանձին պարծանքով էին փոխառում եւ իրենց ժառանգներին օտար անուններ շնորհում՝ դրանով հավերժացնելով ժողովուրդների բարեկամության գաղափարը եւ աշխարհին հավաստիացնելով անխտիր բոլոր ժողովուրդների համեմատ իրենց անհուն սերը: Օրինակի համար, մի հանգամանք, եթե չի էլ ենթադրում մարդկային այդ ջերմ զգացման առկայությունը, ապա զոնե այդ քաղաքի բնակիչների ավանդական սրտաբացության եւ լայնահոգի լինելու ամժխտելի պայցույցն է: Նկատի ունեմ իմն դարերում Ավ-կոյունլու եւ Կարա-կոյունլու ցեղերի ժառանգների մեջ տարածված անունների ամենաբազմազան տեսականու առատությունը Գործիսում՝ Ջավադ, Գյուլնազար, Ջավահիր, Ջահանգիր, Գյուլեր, Գյուլում, Ջիվան, Շամխալ, Գյուլնարա, Բախճի, Սայիդա, Միրզա, Արզուման, Փարսադան, Քալանթար եւ այլն: Չմայած այդ ցեղերի ներկայացուցիչների՝ Ջանգեզուրը կուլ տալու անհագ պարծանքի մասին ամենքը գիտեին: Արդյո՞ք դա անհիշաչարության եւ սրտաբացության սրտառուց օրինակ է: Անկասկած: Ինչ էլ չլինի՝ հարեւաններ ենք: Բայց զարմանալի է՝ ինչո՞ւ թուրքը երբեք իր երեխային Անահիտ, Աստղիկ, Արտավազգ, Արամ, Ռուբեն կամ Վահան անունը չի տալիս: Համենայն դեպս երբեք չեմ լսել: Միակողմանի հարեւանությունն ասեմ, թե՛ միակողմանի բարեկամություն:

«Աստված պահի քեզ, Նժդե՛հ», – օրհնում էր տատս, բայց եւ երախտագիտությամբ հիշում քաղաքի հրապարակով անցնող եւ հանգրվանելու տեղ փնտրող քարավանի պառավ թրքուհուն, որը սիրալիրորեն իր յարուի գուլ կաթով բուժել էր ին՝ իր թռուռիկի, բրոնխիտը...

Սակայն արեւելյան հարեւանների հանդեպ իրենց սերը հավերժացնելուց բացի իմ սիրելի քաղաքի բնակիչները տեսնեիք, թե ի՞նչ ջանասիրություն են հանդես բերում



ՏՆՈՒՅՈՒՄ

Ռաիսա Ալբերտի Ղարազոյան (Բոժկո): Ուկրաինայի գրողների միության անդամ 1988 թվից: Հայաստանի գրողների միության արտասահմանյան անդամ 2001 թվից: Ուկրաինական գեղարվեստական գրականության հայ թարգմանիչ: Ծնվել է 1948թ. հոկտեմբերի 27-ին Գործիս քաղաքում: Ավարտել է Երեւանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը (1973թ.), սովորել է Երեւանի պետական կոնսերվատորիայի մեներգչության ֆակուլտետում, աշխատել է Ա.Սպենդիարյանի անվան Երեւանի օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում՝ երգչախմբի արտիստուհի (1971-73թթ.), 1974թ.՝ Կիեւ տեղափոխվելուց հետո՝ Կիեւի դրամատուրգների կոմիտեում (1978-88թթ.), Ուկրաինայի ազգության գործերի կոմիտեում (1992թ.): Ուկրաինեերենի կատարելագրման տիրապետելով՝ Ռաիսա Ղարազոյանը դարձավ բնագրից ուկրաինական գեղարվեստական գրականության առաջին հայ թարգմանիչը, եղել է «Միասնական ընտանիքի զգացում» գրական մրցանակի ժյուրիի անդամ: Նրա թարգմանությամբ հայերեն լույս են տեսել ուկրաինական ժամանակակից եւ դասական գրողների հետեւյալ գործերը. Գրիգոր Տյուտյունցիի «Կլիմկո» վիպակը, «Պիոներ» ամսագիր, N,6-10, Երեւան, 1980թ., Ուկրաինական ժամանակակից պատմվածքի անթոլոգիան՝ «Կենց ծառը», «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1981թ., Ուկրաինական մանկական խաղերի ժողովածուն՝ «Ծաղկուն այգի» (կազմող), «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1982թ., Վ.Չեմյակի «Կարապետի երամը» վեպը, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1982թ., Պ.Չախերեբենու «Եվփրաքսիա» վեպը, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984թ., Ուկրաինական ժողովրդական հեքիաթների ժողովածուն, «Արեւիկ» հրատարակչություն, Երեւան, 1988թ., Գրիգոր Տյուտյունցիի «Ասպետի մահը» պատմվածքների ու վիպակների ժողովածուն, «Սովետական գրող հրատարակչություն», Երեւան, 1989թ., Լեհական ժողովրդական հեքիաթների ժողովածուն, «Արեւիկ» հրատարակչություն, Երեւան, 2006թ., Ուկրաինական ժողովրդական առաջաբանով, «Արեւիկ» հրատարակչություն, Երեւան, 2010թ., Մ.Կոցյուբինսկու «Մոռացված նախնիների սովերները», վիպակ, Մ.Փարաջանով, «Հավերժական շարժում», Էսես, «Նաիրի» հրատարակչություն, Երեւան, 2012թ., ինչպես նաեւ ուկրաինական դասական ու ժամանակակից գրողների՝ Յ.Յանովսկու, Օ.Գոնչարի, Մ.Ստելմախի, Վ.Բլիզնեցի, Գր.Տյուտյունցիի, Ի.Չեմեդի, Վ.Յավրովսկու, Վ.Շկլյարի, Ե.Պաշկովսկու, Օ.Գովդայի, Օ.Ույանցեկոյի եւ այլոց պատմվածքներն ու նովելները, որոնք տարբեր տարիների լույս են տեսել հայկական պարբերական մամուլում:

անվանաբանության ուսումնասիրությունների ասպարեզը լայնացնելու գործում, միեւնույն ժամանակ ապացուցելով պրոլետարական հեղափոխության գաղափարին իրենց անմնացորդ նվիրված լինելը: Շատերն իրենց զավակների անունով պարզապես հեղափոխության խորհրդանիշներն էին անմահացնում: Օրինակ, մաթեմատիկայի իմ սիրելի ուսուցչի անունը Կոմբրիգ էր՝ Կարմիր գեներալի պես մի բան, մի ուրիշին կոչում էին Լեճորոշ, այսինքն՝ Լեճինյան դրոշով, Մառլեն, Կառլեն անունները՝ Մարքս-Լենին-Էնգելս եռյակի հապավումն էր, Կոմունը՝ երեկ թե կոմունան է, եւ այլն:

Իսկ եվրոպական, սլավոնական եւ այլ ժողովուրդների անունների առատությամբ դժվար թե ուրիշ մի այլ քաղաք գտնվեր աշխարհում: Անշուշտ, Գործիս անչափ մարդասիրական, քաղաքակիրթ, կոմունիստական գաղափարախոսության տեսակետից էլ նույնիսկ ինտերնացիոնալ քաղաք էր: Ինչ անուններ ասես չէիք գտնի այնտեղ՝ էլ Համլետ, Օֆելյա, Դեզդեմոնա, Մեդեա, Մելանյա, Նորա, Գրիգելյա, Մադուրա, էլ Ալիսա, Լարիսա, Ռաիսա, Լյուսյա, Ամժելա, Ռոզա, Գրետա, Մադլեն, էլեոնորա, էլ Ջոյա, Լաուրա, Սպարտակ, Ռոմիկ, Լիպարիտ, Էդուարդ, Շարունակությունը՝ էջ 5

Լուրեր

Սյունիքի մարզպետարանը դեռեւս ամիսներ առաջ խնդրել էր Սյունիքի մարզի դատախազության աջակցությունը՝ մարզի գյուղացիներից վերադարձնելու մոտ 20 մլն դրամի հասնող բարձրակ սերմացուի փոխարժեքը (1կգ-ը՝ 160 դրամ), որ տրվել էր 2011թ.: Հարցը բազմաթիվ դեպքերում լուծվում է դատարանի միջամտությամբ: Դժվարություններ կան նաեւ 2012թ. հատկացված ցորենի վճարը վերադարձնելու հարցում: Նոյեմբերի 10-ի դրությամբ դեռեւս չէր հավաքվել մոտ 80 մլն դրամ:

Ըստ Կապանի քաղաքապետարանի տարածած տեղեկատվության՝ վերջին շրջանում Կապանում տարածված լուրերն այն մասին, որ քաղաքապետարանում եւ քաղաքապետարանի ենթակա կառույցներում նախատեսվում են զանգվածային կրճատումներ, չեն համապատասխանում իրականությանը: Նման ենթադրության առիթը թերեւս այն է, որ քաղաքապետարանը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն երկու ամիս առաջ՝ հոկտեմբերի 31-ից, մի շարք աշխատողների ծանուցագրով տեղեկացրել է, որ 2014թ. հունվարի 1-ից դադարեցնելու է 2010թ. դեկտեմբերի 15-ից սկսված աշխատանքային հարաբերությունները: Պատճառն այն է, որ քաղաքապետարանը նախատեսում է ստեղծել նոր կառույցներ, որոնցում կընդգրկվեն պայմանագրի ժամկետը չերկարացրած այն աշխատակիցները, ովքեր կանցնեն համապատասխան ատեստավորում: Սույն նախաձեռնությամբ քաղաքապետարանը նպատակ ունի օրենքով սահմանված կարգով առավել արդյունավետ դարձնել իրականացվող աշխատանքը եւ ոչ թե կրճատել առկա հաստիքները:

Նոյեմբերի 8-ին Կապանի N5 հիմնական դպրոցում ընթացող մեդիագիտության դասընթացին հրավիրվել էր «Սյունյաց երկիր» թերթի լրագրողը, ով դասախոսություն կարդաց դպրոցում բարձր առաջադիմություն ցուցաբերած աշակերտների համար: Դասընթացի նպատակն էր՝ օգնել երեխաների մասնագիտական կողմնորոշմանը: Դպրոցականները համակ ունադրությամբ լսեցին դասախոսությունը, այնուհետեւ բարձրացրին իրենց հետաքրքրող հարցերը եւ ստացան սպառիչ պատասխաններ:

ՇՆՈՐՀԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ Խորին երախտագիտությունս եմ հայտնում «Կապանի թշկական կենտրոն» ՓԲԸ ակնբույժ ժամանա Սարգսյանին, տեսողությունը կորցրած մայրիկիս աչքի լույսը վերականգնելու համար: Թող որ թշկության նշտարը բազում հիվանդների փրկությանը ծառայի:
Սիվկա Սանդրյան, ք.Կապան

ՇՆՈՐՀԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոցի տնօրինությունն է հայտնում Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանին եւ «Ջանգեզուրի պղնձանոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանին: Նրանց բարի կամքի շնորհիվ մարզադպրոցի չորս մարզածելի 120 սան իրենց պարամունքներն են շարունակում կոմբինատի նորոգ մարզադահլիճում, ինչի շնորհիվ անհամեմատ բարելավվել են նրանց մարզումային պայմանները: Մարզադպրոցի տնօրինությունը լիահույս է, որ կրթօջախի մյուս մարզածելի սաները հնարավորություն կունենան եւս մարզվել ձեռնարկության մարզադահլիճում:

ԾՉԾ՝ ԶՊԾ՝ ԾՉԾ՝ ԾՉԾ՝ ԾՉԾ՝ ԾՉԾ՝ ԾՉԾ՝

ՌՈՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ. «Միջին-մասնագիտական կրթական համակարգն առհասարակ անարդար է մեր օրերում»

Սկզբնա՝ էջ 2

դրեր ենք պատրաստում հենց առողջապահական հիմնարկների համար: Խնդիրն այն է, որ տարիներ շարունակ լինելով առողջապահության մասնագետներ ենք բնակարանային տակ, հեռու էինք մնացել կրթական մի շարք ծրագրերից: Բոլորս տեղյակ ենք, թե միջազգային կազմակերպություններն ինչ ներդրումներ են անում կրթական համակարգում: Մենք զուրկ էինք այդ անձինք: Հուսով ենք, որ սրանից հետո մենք էլ կընդգրկվենք կրթական գործի բարելավմանը միտված միջազգային ծրագրերում:

— **Այնուամենայնիվ, ի՞նչ է իրենից ներկայացնում «Կապանի բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը: Հակիրճ ներկայացրե՛ք:**

— Կրթօջախը սկսել է գործել 1959-1960 ուստարվանից: Ի սկզբանե նպատակ ուներ հարավային Հայաստանի շրջաններն ապահովել միջին-մասնագիտական կադրերով: Եվ այսօր, եթե չեն սխալվում, Վայոց ձորից մինչև Մեղրի ընկած բնակավայրերի բուժօգնականների միջին օղակի մասնագետների 90%-ը մեր կրթօջախի սաներն են: Մինչև 1996-ը, թե 1997-ը, երբ Ստեփանակերտում բացվեց բժշկական քոլեջ, Արցախից եւս գալիս էին մեզ մոտ ուսանողներ: Կապանի քոլեջը՝ նախկին բժշկական ուսումնարանը, կադրեր էր պատրաստում երեք մասնագիտության գծով՝ բուժքույր, ֆելդշեր, մանկաբարձ: Եվ հիվանդանոցները, եւ սանէպիդկայանները մասն կադրերի պահանջարկ ունեին: 1992-ի հոկտեմբերին, երբ ստանձնեցի տնօրենի պաշտոնը, պատերազմական իրավիճակից ելնելով, վերաբացեցինք բուժական ֆակուլտետը՝ Սպարապետ Վազգեն Սարգսյանի նախաձեռնությամբ: Մեզ պետականով երկու 30 տեղ հատկացրին, նաեւ ուսումնական ծրագրեր: Երկու տարի ֆելդշեր պատրաստեցինք, ովքեր ավելի լայն լիազորություններ ունեին, քան բուժքույրերը: Դրանք այն տարիներն էին, երբ ընդունվում էին դիմորդներ, ովքեր, պարզապես ֆինանսական հնարավորություններից ելնելով, հնարավորություն ունեին սովորելու Երեւանի բուհերում: Եվ դիմորդների թվում ունեցանք երեք ոսկե, մեկ արծաթե մեդալակիր: Այդպիսի իրողություն էլ գրանցվեց:

Ինչեւէ, քանի որ բուժքույրի եւ մանկաբարձի այլեւս այդքան պահանջարկ չկար, ուսումնական գործընթացում երկու մասնագիտություն ներդրեցինք՝ ատամնատեխնիկական գործ եւ դեղագործություն: Այդպիսով չորս բաժին մեզանում գործեց: Մինչև 2010թ., երբ ունեցանք հիմնադրող բաժինը՝ «Բժշկական կոսմետոլոգիա»: Այս ուստարում արդեն մեր մասնագիտություններ ունեցանք՝ «Բուժական մեքսուր» եւ «Լաբորատոր անալիզ» բաժին, բայց վերջինում դիմորդ չունեցանք: Որքան էլ գովազդեցինք այդ բաժինը, արդյունք չեղավ: Այս պահին վեց բաժին է գործում: Մեկ առաջին կուրս ունենք «Բուժական մեքսուր» մասնագիտությամբ, մյուս մասնագիտությունների գծով առաջինից մինչև ավարտական կուրսերը գործում են: Դեղագործություն մասնագիտությամբ բացվել է նաեւ

հեռակա բաժին՝ ուսման 3 տարի տեւողությամբ:

— **Պետականների համակարգում ընդունված քանի՞ սովորող ունեցաք, քանի՞ սը վճարովի:**

— Այս ուստարում պետականների համակարգում ունեցանք 30 ուսանող, դիմորդների ընդունելության պլանը կատարվեց 100 տոկոսով: Վճարովի համակարգում շատ ցածր է ընդունելության ցուցանիշը: «Բուժական կոսմետոլոգիա» բաժինը վճարովի է, բայց բոլոր տեղերը լրացված են: «Լաբորատոր անալիզ» մասնագիտացումն ինքնին գործնական նշանակություն ունի, ովքեր գալիս են փաստաթղթերը հանձնելու, հայտնում ենք, որ ավարտելուց հետո աշխատանքի են ընդունվելու: Հարցում ենք արել մարզի բուժօգնականների, բժշկական կենտրոնների տնօրեններին, թե ինչ կադրերի պահանջարկ ունեն: Պահանջված մասնագիտացումներն են բուժական մեքսուրը եւ լաբորատոր անալիզը: Հաշվի առնելով պահանջարկը՝ մասնագետներ ուղարկեցինք վերապատրաստման, արտոնագիր ձեռք բերեցինք: Պիտի ասես, որ այս ամենում մեզ ընդառաջեց հանրապետության առողջապահության նախարար Դերենիկ Դունայանը:

— **Իսկ սովորողների համակարգում թերի բեռնվածությունը բացասաբար չի՞ ազդում ձեր աշխատանքի բնականոն գործունեության վրա:**

— Ցավոտ հարցադրում է, արդեն մի քանի տարի է՝ այդ պրոբլեմն ունենք, քանի որ սովորողների համակարգի համակարգը ճորմալ չի կատարվում: Վճարովի տեղերի մասին է խոսքը: Ֆինանսական մուտքերը պակասում են, ինչը բացասաբար է ազդում աշխատանքի վրա: Կրթօջախի մասնաշենքի ջեռուցման համար դիմեցինք նախարարություն, ընդ որում՝ մի քանի անգամ: Հետո դիմեցինք այն ժամանակվա վարչապետ Անդրանիկ Մարգարյանին: Կառավարության պահուստային ֆոնդից պահանջվող գումարի մի մասն Ա.Մարգարյանը հատկացրեց, մյուս մասն էլ տրամադրեց «Ջանգեղուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն: Այդ տարում եւ կաթսայատունը կառուցեցինք՝ հազարավելով անհրաժեշտ սարքավորումներով, եւ գազի ֆիկացումն իրականացրինք: Մի խոսքով՝ հարցը հիմնավորապես լուծվեց:

«Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ տնօրեն Հրաչ Զաքարյանի աջակցությամբ փոխհատուցվեց քոլեջի աշխատողների աշխատավարձի մի մասը, բացի այդ, ընկերությունը կրթօջախին հատկացրեց ութ համակարգիչ:

— **Եվ, այնուամենայնիվ, ո՞րն է գլխավոր հիմնախնդիրը՝ ուսումնական հաստատության զարգացմանը խոչընդոտող:**

— Կրկնեմ վերն արտահայտած միտքս. դա ֆինանսների սղությունն է: Կան մի քանի միջոցներ, որոնց շնորհիվ հնարավոր է քոլեջի ֆինանսական դրությունը բարելավել: Միջոցներից մեկն այն է, որ որոշ

գործարարներ, կազմակերպություններ, ձեռնարկություններ, լինեն պետական, ոչ պետական, մասնավոր, ոչ մասնավոր, ներդրումներ անեն միջին-մասնագիտական կրթությամբ կադրեր պատրաստող ուսումնական հաստատություններում: Խոսքը միայն մեր մասին չէ: Միջին-մասնագիտական կրթական համակարգն առհասարակ տուժած է, եթե չասենք անտեսված է մեր օրերում: Հայկական հոգեկերտվածքի հետ կապված հանգամանք է. ծնողների մեծ մասը ձգտում է իր զավակին բարձրագույն կրթություն տալ, իսկ դրա համար միանշանակ ստեղծված են այնպիսի պայմաններ, որ ցածր զանախատական ստանալու դեպքում էլ դիմորդն ընդունվում է բուհ: Եվ եթե այդպիսի «բարենպաստ» հնարավորություն կա, ինչու՞ երեխան բարձրագույն կրթություն չստանա: Դա առաջին պատճառն է, ինչ հետևանքով մեր դիմորդները պակասել են: Մինչդեռ մեր կրթօջախում նախկինում մրցույթով էին ընդունվում:

Երկրորդ՝ մեր շրջանավարտը պիտի հնարավորություն ունենա քոլեջում ստացած գիտելիքներն օգտագործել գործնականում: Այսինքն՝ ավարտելուց հետո լուծվի նրա զբաղվածության խնդիրը: Նաեւ մրցունակ լինի աշխատանքային շուկայում: Դա նաեւ գովազդի մի մաս է, երբ ատանմատեսիկը մի որեւէ տեղ աշխատում է, ասելով, որ ինքը Կապանի բժշկական քոլեջն է ավարտել: Երաշխիք պիտի լինի, որ շրջանավարտն աշխատանք է ունենալու: Այսօր բուժքույրերի ու մանկաբարձների զբաղվածության հարցը փակված է: Յուրաքանչյուր տարի բուժօգնականներում եւ բժշկական կենտրոններում՝ կապված ֆինանսների, մահճակալների կրճատման հետ, այդ կադրերը դուրս են մնում: Այդ պատճառով այս ուստարում ընդունվել ենք ընդամենը հինգ մանկաբարձ եւ մուլթիբարձ բուժքույր, այնքան, որքան, ռեալ գիտենք, տեղավորվելու են աշխատանքի:

— **Այնուհանդերձ, Ձեր մանկավարժական կենսափորձը, այժմ զբաղեցրած պաշտոնը թույլ են տալիս, որ Դուք ընդհանուր գծերով ներկայացնեք հանրակրթական դպրոցների շրջանավարտների կրթական մակարդակը: Մեզ հետաքրքրում է, թե ի՞նչ պատրաստակամություն են դիմորդները ներկայանում ընդունելությանը:**

— Համեմատելով 1970-80-ական թվականների հետ, երբ դպրոցում ստացած գիտելիքներով կարող էիր բուհ ընդունվել, այժմ նշանոցը շատ է իջել: Նախկինում մենք էլ դիմորդներ ենք ունեցել, ովքեր դպրոցում միջին կամ ցածր առաջադիմություն են ունեցել, բայց ընդհանրապես տեղեկացված են եղել, ընդունելության քննության էին ներկայանում փորձի առկայությամբ: Եթե իրենց հարցաթերթիկի հարցերին չէին պատասխանում, գոնե ինչ-որ բան գիտեին: Հիմա ի՞նչ է կատարվում: Եթե երեխան ծնողի տեսադաշտում է, վերջինս հետևում է նրա առաջադիմությանը, նաեւ չթաքցնենք՝ կրկնուսույցի մոտ ուղարկում, արդյունքը սպասել չի տալիս: Բայց ովքեր չեն հետևում, վիճակը սարսափելի է: Մեզ մտն էլ դիմորդները գալիս են շատ ցածր մակարդակ ունենալով ոչ միայն մասնագիտական առարկաների, այլև ընդհանուր

զարգացածության առումով: Ահա սա է ընդհանուր պատկերը:

— **Պարոն Սարգսյան, մեր գրույցը ցանկանում ենք տեղափոխել մի այլ հարթություն: Դուք մարզկենտրոնում քաղաքական գործչի համբավ ունեք, ամենեւին պասիվ կարգավիճակում չեք եղել, քանիցս արժարժեք են Ձեզ քաղաքապետի թեկնածու, պատգամավորի թեկնածու առաջադրելու հարցերը, մասնավոր գրույցներում միշտ յուրօրինակ կարծիք եք ունեցել Կապանի ներքաղաքական, նաեւ Ձեր կուսակցության քաղաքականության վերաբերյալ: Քանի որ մենք առաջին անգամ ենք գրուցում մեր թերթի համար հրապարակում պատրաստելու նպատակով, կուզենայինք իմանալ, թե ինչպես եղավ Ձեր մուտքը քաղաքականություն:**

— Իմ սերնդի քաղաքական հասունացումը համընկավ Արցախյան շարժման, հայ-ադրբեջանական հակամարտության, անկախ պետականության սկզբնավորման հետ: Մասնավորապես, երբ հայ-ադրբեջանական կոնֆլիկտը թափ էր առնում, բժիշկ էի աշխատում Մեղրիում: Իմ Կապան տեղափոխվելը կապված էր Սպարապետ Վազգեն Սարգսյանի հետ հարաբերություններով: Մեղրիում ծանոթացանք, Նյուվադի գյուղի համար մարտական գործողություններ եղան, գոհեր ու վիրավորներ, երբ ամեն ինչ ավարտվեց, նա ինձ փոխանցեց, որ պիտի տեղափոխվեմ Կապան, որովհետեւ Մեղրիում այլեւս լուրջ վտանգ չէր սպառնում: Այստեղ շփվեցի չվճարող տղաների հետ, քանի որ գիւծառայության անցա որպես բժիշկ: Հետո իմ բժշկական ուսումնարանի տնօրեն նշանակեցին: 1998-ին մայրաքաղաքից Հայաստանի հանրապետական կուսակցությունը ներկայացնող մարդիկ եկան, մասնավորապես Անդրանիկ Մարգարյանը, Կապանում եւս հիմնադրեցին Հանրապետական կուսակցության կառույց, ստեղծվեց խորհուրդ: Նախաձեռնողներից մեկը՝ Սերժ Մկրտչյանը, զարմացավ, թե ինչու չեմ ընդգրկվում խորհրդի կազմի մեջ: Ես էլ թե՛ հասկանամ, թե ինչ է կատարվում՝ հետո միայն:

Ի վերջո, պետականամետ լինելը մի բան է, կուսակցական լինելը մեկ այլ բան: Բայց մի տարի հետո, երբ ձեւավորվեց «Միասնություն» դաշինքը, շատ սրտովս էր, անդամագրվեցի Հանրապետական կուսակցությանը, նաեւ Կապանի տարածքային կազմակերպության երիտասարդական թեւի ղեկավարը դարձա:

— **2002-08թթ. եղել եք կուսակցության Կապանի տարածքային կազմակերպության խորհրդի նախագահ: Բավականին տպավորիչ ժամանակահատված...**

— Դրանք պատասխանատու տարիներ էին: ՀՀ-ն այդ տարիներին լուրջ հայտարարություններով հանդես եկավ, հստակեցվեցին չափորոշիչները, որոնք թույլ էին տալիս համարել կուսակցության շրջերը: Իհարկե, կողքից եղան քննադատություններ, ինչին բնավ էլ համաձայն չեմ: Աշխարհում ընդունված կարգ է՝ իշխող կուսակցություն է թեւադրում խաղի կանոնները: Ինչի՞ համար է կուսակցությունը. որպեսզի մի գաղափարի շուրջ համախմբված մարդիկ հասնեն իշխանության, իրենց գաղափարական մո-

դելը ներդնեն երկրի կառավարման համակարգում:

— **Կարելի՞ է իմանալ, թե իր շարքում քանի անդամ ունի ՀՀ-ի Կապանի տարածքային կազմակերպությունը:**

— 2000-ից ավելի, 2005-ին ունեինք 260-280 կուսակցական: Վերջին վեց-յոթ տարում մոտ 6-8 անգամ աճել է կուսակցականների թիվը:

— **Հարցն ինքնանպատակ չարվեց. մոտ ութ անգամ աճել է կազմակերպության անդամների թիվը, բայց, կարծեք, կազմակերպության քաղաքական կշիռն անընդհատ նվազում է: Ասածս կարող են հիմնավորել երկու փաստով. Հանրապետական կուսակցության առաջնորդը, ով նաեւ հանրապետության նախագահն էր եւ նախագահի թեկնածուն, փաստորեն Կապանում պարտություն կրեց: Երկրորդ փաստը՝ սեպտեմբերի 29-ի Աժ պատգամավորի լրացուցիչ ընտրության ժամանակ արձանագրվեց ընտրության մասնակիցների չափազանց ցածր՝ եթե չեմ սխալվում, 43 տոկոս: Ինչպե՞ս բացատրել, որ կուսակցականների թիվն աճում է, բայց Հանրապետական կուսակցությունը լուրջ կորուստներ է ունենում Կապանի քաղաքական կյանքում:**

— Ես մի նկատառում ունեմ. այն ընտրությունների ժամանակ, երբ նախընտրական շտաբները սխալ են ձեւավորվել, բնականաբար, ճիշտ չեն աշխատել, այդ ընտրությունը պարտության է դատապարտվել: 1996թ. Լեւոն Տեր-Պետրոսյանը Կապանում պարտվել է, էլի շատ կան էին ձեւավորվել շտաբները, անարդյունավետ իրականացվել շտաբային աշխատանքը՝ քաղաքային շտաբներից սկսած մինչև մարզային: Գիտե՞ք՝ ինչպես է: Արդյունք լինում է այն ժամանակ, երբ ճիշտ է ընտրվում աշխատանքի սկզբունքը: Վերելից ներքեւ իրար պետք է ճիշտ հասկանան: Նախագահական վերջին ընտրությունից առաջ հանրապետության նախագահ, ՀՀ-ն նախագահ Սերժ Սարգսյանը շատ հստակ պայման դրեց. որեւէ նախընտրական կաշառք չի լինելու: Հետեւաբար, երբ շտաբ էր ձեւավորվում, պիտի հաշվի առնվեր այդ հանգամանքը, թե ով պիտի պատասխանատվություն կրի այդ աշխատանքի համար: Բայց ամեն ընտրության ժամանակ շտաբներում նույն մարդիկ են լինում: Դա հետո խնդիրներ է առաջացնում...

Երկրորդ՝ Աժ պատգամավորի լրացուցիչ ընտրության մասին: Ինքն իր ելույթում դա պասիվ ընտրություն էր: Ազգային ժողովը տարիուկես առաջ արդեն ձեւավորվել էր: Իշխանությունները ձեւավորվել էին: Մեծամասնական այդ ընտրությունից ակնկալիք չկար, պարզապես մի պատգամավոր փոխարինվում էր մյուսով: Նույնիսկ մարզկենտրոնի քաղաքական ուժերից «Բարգավաճ Հայաստան», «Հայ հեղափոխական դաշնակցության» տեղական կառույցները չմասնակցեցին Աժ պատգամավորի սեպտեմբերի 29-ի լրացուցիչ ընտրությանը, նույնը նաեւ Կապանի քիչ թե շատ հեղափոխական ունեցող մարդիկ: Առանձին երիտասարդների շրջանում որոշակի ակտիվություն կատարեց առաջադրվելու առումով, բայց ինչպես ծնվել էր ակտիվությունը, այնպես էլ մարք:



ԴԱՎԻԹ ՍԻՄՈՆՅԱՆ
«Վերադարձ» 34 հիմնադիր

«Վերադարձը» համագործակցության կոչ է անում

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Մարզկենտրոնի երիտասարդներն ինքնադրսեւորվելու նոր ուղիներ են փնտրում: Համեմայն դեպք, սեպտեմբերի 13-ին ստեղծվել է «Վերադարձ» երիտասարդական քաղաքացիական շարժում» հասարակական կազմակերպությունը (հիմնադիրներ՝ Դավիթ Սիմոնյան, Արսեն Մարտիրոսյան): Իսկ նույն օրվա 3-ին տեղի ունեցավ կազմակերպության գրասենյակի բացման արարողությունը: Կապանի մասնական զբոսայգում գտնվող գրասենյակի բացման շնորհանդեսին մասնակցում էին մարզկենտրոնի բնակչության տարբեր խավերի ներկայացուցիչներ, հրավիրված անձինք և համախոհներ:



Կազմակերպության անդամ Գոռ Թադևոսյանը ներկայացրեց «Վերադարձի» գործունեության մոտեցումներն ու սկզբունքները՝ ընդհուպ մինչև համագործակցությունը մի-

ջազգային կազմակերպությունների հետ: «Ժամանակն է մի կողմ դնել անձնական կաշկանդվածությունն ու ամբիցիաները և համախմբվել

Ինչո՞ւ վերադարձ. «Քանի որ հավատում ենք, որ հայի ապագան Հայաստանում է, առավել ևս՝ կապանցունը՝ կապանում», - գրասենյակի բացման ողջերթի խոսքում ասաց Դավիթ Սիմոնյանը և հավելեց՝ «այս հողն ավագ սերնդի հայրենասիրությանը, արյան ու քրտինքով է պահպանվել, իսկ հայը պիտի Հայաստանում ապրի, մի հիմնահարց, որ պիտի հուզի յուրաքանչյուր հայի: Մենք չենք դատապարտում նրանց, ովքեր հեռանում են հայրենիքից, բայց ցավ ենք ապրում արտագաղթ կոչվող սոցիալական չարիքի աճող չափերի համար»: Բանախոսը նաև տեղեկացրեց, որ «Վերադարձի» գործունեությունն ընդգրկելու է տարբեր հասարակական միջոցառումներ՝ առողջապահության, կրթության, մարզական, մշակութային ոլորտներին առնչվող: Սակավ չեն լինելու նաև բարեգործական ակցիաները: Իսկ կազմակերպության նպատակը, նախնաառաջ, լինելու է հանրապետությունում քաղաքացիական հասարակության ձևավորմանն աջակցելը, հասարակություն, որի կենտրոնում մարդն է իր արժանապատվությանը, ազատ քաղաքացին, ով գիտի իր իրավունքները, պայքարում է դրանց համար և հասնում արդարության: Օրվա խորհրդի առիթով Դավիթ Սիմոնյանը շնորհավորեց ներկայից հայտնվել, որ ցանկանում են համագործակցել բոլոր կառուցողական ուժերի հետ, ովքեր կաջակցեն իրենց ծրագրերի իրականացմանը:

Մշակութային լավագույն քաղաքային համայնք ճանաչվեց Գորիս քաղաքը

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման 17-ամյակի կապակցությամբ նոյեմբերի 10-ին անցկացվեց «Տարվա լավագույն համայնք - 2013» մրցանակաբաշխությունը, որին ներկա էին ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը, մարզպետներ, համայնքապետեր, ավագանու անդամներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: ՀՀ տարածքային կառավարման նախարարության և Հայաստանի համայնքների միության կողմից համատեղ անցկացվող «Տարվա լավագույն համայնք» մրցանակաբաշխությունն անենամյա է, ավանդական բնույթ ունի և կազմակերպվում է սկսած 2006 թվականից: Մրցանակաբաշխությունը նպատակ ունի ավելի բախանցիկ ու հրապարակային դարձնել համայնքներ

ի գործունեությունը, ինչպես նաև ձեռնարկել առողջ մրցակցություն՝ խթանելով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Մրցանակաբաշխությունը նաև ընթացիկ տարում հաջողություններ արձանագրող համայնքների աշխատանքի գնահատման միջոց է: Մրցանակաբաշխությունն անցկացվում է համայնքների կողմից գրավոր ներկայացված հայտերի հիման վրա: Գնահատումն իրականացվել է հատուկ ձևավորված մրցութային հանձնաժողովի կողմից: Փոխվարչապետը շնորհավորեց ՏԻ մարմինների ներկայացուցիչներին՝ օրվա կապակցությամբ և արդյունավետ աշխատանք մաղթեց համայնքների զարգացման, տեղական ժողովրդավարության ամրապնդման գործում: Մրցանակաբաշխությունն անցկացվեց հինգ անվանակարգով: 2013թ. լավագույն քաղաքա-

յին համայնք ճանաչվեց Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքը, լավագույն գյուղական համայնք՝ Վայոց ձորի Ռինո համայնքը: «Լավագույն համայնք» մրցանակաբաշխության շրջանակում հատուկ մրցանակների արժանացան նաև Ապարան, Քաջարան, Մերձավան, Պեմզաշեն համայնքները: «Մաքուր համայնք» անվանակարգում մրցանակները շնորհվեցին Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքային և Արմավիրի մարզի Լեռնագոգ գյուղական համայնքներին: «Կանաչապատ համայնք» ճանաչվեց Լոռու մարզի Ստեփանավան քաղաքային համայնքը, Իջևան քաղաքին այս անվանակարգում տրվեց հատուկ մրցանակ: Մշակութային լավագույն քաղաքային համայնք ճանաչվեց Գորիս քաղաքը, գյուղական համայնք՝ Արմավիրի մարզի Փարաքար համայնքը: Հաշվի առնելով «Համագործակցության մշակութային մայրաքաղաքներ» միջպետական ծրագրի շրջանակում «ԱՊՀ մշակութային մայրաքաղաք ճանաչված» Գյումրիում տարվա ընթացքում անցկացված միջոցառումները՝ Գյումրիին շնորհվեց հատուկ մրցանակ: «Տարվա լավագույն կայք»

մրցանակը տրվեց Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքին: Օրվա կապակցությամբ հնչեցին մի շարք շնորհավորանքի խոսքեր: Շնորհավորանքի խոսքով հանդես եկավ նաև Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանը: «Այսօր տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների համար տոնակա օր է, քանի որ 1996թ. նոյեմբերի 10-ից ներդրվեց տեղական ինքնակառավարման համակարգը, և այդ օրն Աժ կողմից ճանաչվեց որպես

տեղական ինքնակառավարման օր: Այս տարիների ընթացքում ՏԻՄ համակարգում տեղի ունեցան մի շարք օրենսդրական փոփոխություններ՝ համակարգի արդյունավետ կառավարումն իրականացնելու համար: Ինչպես Գորիս համայնքը, այնպես էլ ՀՀ բոլոր քաղաքային և գյուղական համայնքներն այս տարիների ընթացքում ստանալան, մշակութային, առողջապահական, սպորտային և այլ բնագավառներում զգալի առաջընթաց են ունեցել: Բարձրացվել է համայնքների բնակիչների բարեկեցությունը, բազմալի աշխատանքներ են կատարվել քաղաքային կոմունիկացիաների՝ ճանապարհների, ջրանատակարարման և ջրահեռացման գծերի, լուսավորության, խաղահրապարակների, պուրակների, նախակրթական, կրթական, բուհական, առողջապահական և մշակութային օբյեկտներում ներդրումների ուղղությամբ: Հավատացնում են Չեզ, որ այսուհետ ՏԻՄ-երն էլ ավելի կամրապնդեն կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ նպաստելով մեր երկրի զարգացմանը: 12.11.2013թ., goris@city.am



ՃԱՆՍՆԱԿ



Երեք տասնամյակով չափվող կենսագրություն

Կապանի Եղիշե Զարենցի անվան N13 հիմնական դպրոցը մարզկենտրոնի համեմատաբար երիտասարդ կրթօջախներից է: 1970-ականներին, երբ կառուցվեցին Բաղաբերդ, Հալիձոր, Ջորջ բնակելի զանգվածները, անհրաժեշտություն առաջացավ դրանց դպրոցահասակ երեխաների համար կրթօջախ կառուցել: 1983-ին Ջորջ թաղամասի մի գողորիկ անկյունում Ողջի գետի ձախկողմյան արեւահայաց լանջին, դպրոց հիմնադրվեց, որտեղ փնտրեցին նշանակվեց վաստակաշատ մանկավարժ, մեթոդիստ, մաթեմատիկայի ուսուցիչ Կամո Առուստամյանը: Երեք թաղամասի դեռահասների կրթության ու դաստիարակության գործը պարզվելով փարավ կրթօջախը, որտեղ անցյալ դարի 80-ական թվականներին դպրոցականների թիվն անցնում էր 1000-ից, ուսուցիչների թիվը հասնում էր մոտ 150-ի: Կրթօջախի սաներից 15-ը դարձել է մեդալակիր՝ 11-ը՝ ոսկե, չորսը՝ արծաթե: Արցախյան պատերազմի մասնակից փառք ազատամարտիկ կյանքը դրեց հայրենիքի փրկության զոհատեղանին:



Զավեն Ստեփանյան, N13 դպրոցի փնտրեց



տնօրեն Զավեն Ստեփանյանը նախ արժանին մատուցեց կրթօջախի անդրանիկ տնօրեն, վաստակաշատ մանկավարժ, բազմաթիվ գրքերի և հոգվածների հեղինակ Կամո Առուստամյանին: Անգնահատելի է մաթեմատիկայի ուսուցիչ դերն այդ առարկայի դասավանդման, նրա կատարած նորամտությունները և վաստակը մասնագետ մանկավարժների պատրաստման գործում: Որպես նորարար մանկավարժ՝ նա մեծ համարում ուներ հանրապետությունում: Առարկայի դասավանդման, նյութի մատուցման թարմ մոտեցումներով սաներին մղում էր ինքնուրույն մտածելուն և նորը գտնելուն: Կյանքի է կոչել մաթեմատիկոսների մի քանի սերունդ: Կամո Առուստամյանը կյանքում կենսուրախ անձնավորություն էր, հայտնի հումորաշաղախ դեպքեր պատմելու ծիրքով, սրախոսություններով: Օրերս դպրոցի 8-րդ դասարանը կոչվեց Կամո Առուստամյանի անվամբ, ինչն ըստ բանախոսի՝ կնպաստի մաթեմատիկայի նկատմամբ դպրոցականների մեջ հետաքրքրության առաջացմանը և այդ առարկայի դրվածքի բարձրացմանը դպրոցում:

Միտ 27 տարի N13 միջնակարգ դպրոցը ղեկավարել է Դարիկո Ավագյանը, ում հաջողվել է ստեղծել դպրոցի հոգսերով ապրող առողջ կուլտուրա, դպրոցն ունեցել է ակնառու հաջողություններ, հաղթող ճանաչվել տասնյակ ուսումնական, արտասուսումնական և դպրոցների բարեկարգման ծրագրերում, իսկ տնօրենն արժանացել է «Ստեղծագործող ուսուցիչ» կոչմանը, պարգևատրվել «Ակսել Բակունց» հուշամեդալով:

Բանախոսը դպրոցի 30-ամյա ուղին բնորոշեց որպես ինքնաշարժ, ձեռքբերումների, մանկավարժական կազմի պատրաստման ընթացք: Երեք տասնամյակում կրթօջախում աշխատել է մոտ 250 ուսուցիչ, կյանք մտել ավելի քան շուրջ 1300 շրջանավարտ, որոնցից շատերը մնայուն հետք են թողել հասարակական կյանքի տարբեր բնագավառներում: Իսկ այսօր դպրոցականների կրթության և դաստիարակության գործն իրականացնում է 30 ուսուցիչ, որից 27-ն ունի բարձրագույն, երեքը՝ միջին-մասնագիտական կրթություն:

2011-12 ուստարվանից դպրոցում կազմակերպվում են ռուսերենի խորացված ուսուցման դասարաններ, որտեղ սովորում են արտերկրից վերադարձած աշակերտներ: Ուսուցումն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով դպրոցը համագործակցում է Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան, Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի հետ: Ամեն տարի իրականացվում է «Ռուսաց լեզու» նպատակային ծրագիրը, որի շրջանակում իրականացվող վարպետաց դասերի, սեմինար պարապմունքների, կլոր սեղանների միջոցով մեթոդական օգնություն է ցուցաբերվում ռուսաց լեզվի մասնագետներին, իսկ դպրոցին հատկացվում են մեթոդական ծրագրեր, դասագրքեր:

Կրթօջախի տնօրենը նշեց, որ ուսումնադաստիարակական գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով դպրոցի բարեկանների օժանդակությամբ հրատապ խնդիրներ են լուծվել, մասնավորապես, «Դանդի փրիչս մեթալս Կապան» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Հրաչ Զաքարյանի հովանավորությամբ ստեղծվել է համակարգչային դասարան, այլոց օգնությամբ ձեռք է բերվել տեսախցիկ, տպող սարք, հեռուստացույց, իրականացվել են բազմազան ծրագրեր, կազմակերպվել դասընթացներ,

վարտներին, դասավանդող ուսուցիչներին, աշակերտներին և սպասարկող անձնակազմին:

Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Նաիրա Ավանեսյանը, շնորհավորելով բոլորին հոբելյանի առիթով, մասնավորապես ասաց, որ տոնական առիթը միայն այն բանի համար չէ, որ շնորհակալական խոսքեր ասվեն, այլ մի հնարավորություն է դպրոցի մասնագետներին, հներին, նորերին իրար հետ շփվելու, քննարկելու և հետաքրքիր ծրագրեր ու մտահղացումներ նախաձեռնելու: Ըստ վարչության պետի՝ դա դպրոցի կուլտուրային հաջողվել է, քանզի համարյա մեկուկես դար է անխիճ մասնավարժներն ու շրջանավարտները, կրթության պատասխանատուներ, դպրոցի սատարող անձինք: Նա Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի անունից կրթօջախին նվիրեց համակարգիչ, ինչպես նաև դպրոցի փոխտնօրեններ, մաթեմատիկայի ուսուցիչ Ռաֆիկ Միքայելյանին, ժամանա վարդապետին, սովորողների հետ դաստիարակական աշխատանքների կազմակերպիչ Ռիմա Մկրտչյանին հանձնեց Սյունիքի մարզպետի շնորհակալագրերը՝ մատաղ սերունդի դաստիարակության գործում ունեցած վաստակի համար:

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի խորհրդակցական Արմեն Սարգսյանը հաջողություններ մաղթելով կրթօջախի կուլտուրային, մի խումբ ուսուցիչների հանձնեց պատվոգրեր: Հանդիսությանը մասնակցում էր Կամո Առուստամյանի կրտսեր որդին՝ Հենրիկ Առուստամյանը, ով երախտագիտություն հայտնեց հոր հիշատակը հարգելու համար և նրա անունը կրող դասարանին նվիրեց մի գեղանկար:

Տարրական դասարանների մեթոդիկորման նախագահ, դասվար Անահիտ Առաքելյանը կրթօջախի հմարակներից է, իր ձեռնարկում մարզպետ N13 դպրոցի գանգի առաջին դրոնացի հետ է մտել դասարան: Եվ իր խոսքում հոգու պարտք համարեց հիշել կյանքից հեռացած մանկավարժներին՝ Կամո Առուստամյան, Լեոնորոշ Դազարյան, Հմայակ Գալստյան, Երմոնյա Ավանեսյան, Օլեգ Դոնյան, Անուշ Մանուչարյան, Անուշ Հովսեփյան, Սուսաննա Թումանյան, ժամանա Բաբայան, Ռուբիկ Բաղդասարյան, ժորա Մարության, Բնարիկ Վարդանյան: Մանկավարժն իր ելույթում հանդես եկավ խոստովանությամբ: «Եթե նորից սկսեի աշխատանքային գործունեությունս, նորից կընտրեի մանկավարժի մասնագիտությունը, նախ՝ սիրում եմ երեխաներին, ապա՝ բերկրանք են ստանում ստեղծագործական աշխատանքից: Եկեք կրթեք, դաստիարակեք մի սերունդ, որ կլինի համամարդկային արժեքների կրող, որ կկարողանա վերացնել մարդու անհատականությունը կաշկանդող անբերույթ շրջանները»:

Ողջերթի խոսքեր ասացին դպրոցի 2012-13 ուստարվա աշակերտական խորհրդի նախագահ Անի Առաքելյանը, ծնող Էվա Մանուչարյանը, ով իր ելույթի մի մասը ձեռնակերպեց չափածո, Կապանի տարածքային կրթության աշխատողների արիեստակցական կազմակերպության նախագահ Եմմա Առաքելյանը: Վերջինս և դպրոցի տնօրեն Զավեն Ստեփանյանը դպրոցի ուսուցիչներին և մյուս աշխատողներին հանձնեցին շնորհակալագրեր և պատվոգրեր:

N13 հիմնական դպրոցի հիմնադրման 30-ամյակին նվիրված հանդիսությունը համեմվեց դպրոցականների երգ ու պարով, ասմունքով:

«Սյունիք» թիմը՝ ԱԺ գավաթակիր



ՄԱՐԶԱԿԱՆ

Կապանցի չորրորդից վեցերորդ դասարանցի մի խումբ դպրոցականներ Վանաձորից վերադարձան մի տպավորիչ գավաթով: Հոկտեմբերի 25-26-ին անցկացվեց «Ազգային ժողովի գավաթի» համարապետական եզրափակիչ փուլի խաղարկությունը, որին ներկա էին նաև ԱԺ նախագահ Հովիվ Աբրահամյանը, փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, պատգամավորներ, կրթության, մշակույթի և սպորտի գործիչներ: Մրցասպարեզ էր մտել հանրապետության մարզերի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 12 թիմ: Մեր մարզի «Սյունիք» հավաքականը ներկայացնում էր Կապանի N3 հիմնական դպրոցի չորրորդ, N5 հիմնական դպրոցի հինգերորդ եւ վեցերորդ դասարանների աշակերտներից կազմված ընտրանին (մարզիչ-ուսուցիչներ՝ Քրիստափոր Գաբրիելյան, Արտյոմ Պողոսյան, Անուշ Ալեուկյան): Մինչ հանրապետական եզրափակիչ փուլին հասնելը՝ նշված թիմերը, ովքեր հանդես եկան երկուական տղա եւ աղջիկ կազմով, հաղթող էին ճանաչվել ներդպրոցական, համայնքային, մարզային փուլերում: Իսկ հանրապետական փուլում կապանցի պատանի մարզիկները մրցեցին վեց մրցածուց մրցության առաջին օրը 60 մ վազք, հեռացատկ, գնդակի նետում, ձգումներ, երկրորդ օրը՝ 500 մ վազք եւ փոխանցումավազք (4X25մ): «Սյունիք» թիմը զգալիորեն առաջ անցավ հետապնդողից՝ Կոտայքի մարզի հավաքականից՝ տուն բերելով պատվավոր գավաթը: Կապանցի մարզիկներից տպավորիչ արդյունքի հասավ Մարիետա Մինասյանը՝ հեռացատկի հատվածում ցույց տալով 4 մ 21 սմ արդյունք: Ինչպես «Սյունյաց երկրին» փոխանցեց «Սյունիք» թիմի ղեկավար, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ Վովա Ավագյանը, գավաթից զատ «Սյունիք» թիմի անդամներն արժանացան պատվոգրերի, նրանց հանձնվեց մարզագրքեր, իսկ նրանց դպրոցներին՝ տարբեր տեսակի խաղաօճակներ:

Ավաճառի մասին է ավելացնել, որ կապանցի դպրոցականների հաղթանակը բնավ պատահական չէր: «Ազգային ժողովի գավաթի» խաղարկությունում անցյալ տարի Սյունիքի թիմը գրավել էր երրորդ տեղը: **ՎԱՀՐԱՍ ՕՐԵՆԵՆԱՆ**

Վերադարձ ելակետին

ՏԵՍԱԿԵՏ

Մատերիալիստական ըմբռնման համաձայն՝ պատմության մեջ որոշիչ մոմենտը վերջին հաշվով անմիջական կյանքի արտադրությունն ու վերարտադրությունն է, բայց սա ինքն էլ, դարձյալ, երկու տեսակ է լինում: Մի կողմից գոյամիջոցների, այն է՝ սննդի, զգեստի, բնակարանի եւ դրանց պատրաստման համար անհրաժեշտ գործիքների արտադրությունը, մյուս կողմից՝ մարդու իրեն արտադրությունը՝ սերնդի շարունակումը: Հասարակական կարգերը, որոնց մեջ ապրում են որոշ պատմական դարաշրջանի եւ որոշ երկրի մարդիկ, պայմանավորվում են արտադրության այդ երկու տեսակներով, մի կողմից աշխատանքի զարգացման աստիճանով, մյուս

կողմից՝ ընտանիքի զարգացման աստիճանով: Արտադրության զարգացումը երկար սպասել չտվեց, մինչեւ որ գտնվեց այն մեծ «ճշմարտությունը», թե մարդն էլ կարող է ապրանք լինել, թե մարդու ուժն էլ կարող է ապրանք լինել, թե մարդու ուժն էլ կարելի է փոխանակել եւ օգտագործել, եթե մարդուն ստրուկ դարձնես: Մարդիկ հազիվ էին սկսել փոխանակությունը, երբ նրանք իրենք էլ փոխանակման առարկա դարձան: Եվ ապրանքային արտադրանքով սկսվեց քաղաքակրթությունը, որի առաջնորդիչ ուժը դարձավ բիրտ ընչաքաղցությունը, նրա առաջին օրվանից մինչեւ այսօր: Եվ քաղաքակրթության միակ վճռական նպատակը դարձավ հարստությունը, դարձյալ հարստությունը եւ երրորդ անգամ՝ հարստությունը, իհարկե ոչ թե հասարակության, այլ՝ զծուծ անհատի հարստությունը: Ֆ. Է. Քաղաքակրթության հիմքը եղել է, կա ու կմնա մի դասակարգի շահագործումը մի այլ դասակարգի ձեռքով (կողմից), նրա ամբողջ զարգացումն անընդհատ հակասության մեջ է ընթանում, եւ ամեն մի բարիք մեկի համար՝ անհրաժեշտաբար չարիք է մյուսների համար:

Քաղաքակրթության մշտական ուղեկիցներն են մեծամասնական ընտանիքը, մասնավոր սեփականությունը եւ նրա ժառանգումը, հարուստների գործերը վարող կոմիտեն այն է՝ պետությունը, դասակարգերը, ազգերը, լեզուները, կրոնները, պատերազմները, կաշառքը եւ կոռուպցիան, պետական բյուջեի հափշտակությունը, հովանավորչությունը... Քաղաքակրթության ողջ ընթացքում գործել է եւ գործում է՝ «ինչու նա, այլ ոչ ես» կարգախոսը: Եվ աշխարհը (հասարակությունը) նորմալ վիճակի մեջ կընկնի ոչ թե այն ժամանակ, երբ իշխանության գլխին կանգնած Պողոսին կփոխարինի Պետրոսը, այլ երբ մարդկությունը դուրս կգա քաղաքակրթությունից՝ այն է՝ կիրառելի մեծամասնական ընտանիքից, սեփականության ժառանգումից, կրոններից, ազգերից, պետություններից... այն է վերադարձ դեպի զարգացած նախնադար՝ հասնելով վերընթաց ժամանակապտույտի բարձր աստիճանի: **Կ. ԹԱԳԵՎՈՍՅԱՆ**
Լ. ՂԱՎԹՅԱՆ
29.06.13թ.

Ո Ւ Շ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն



«ԷԿ» ՀԱՅՄԱՆՎԱՍ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԳԵՏ ԱՆՎՊԱՅՈՎ ԵՐԵՎԱՆԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՂ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հայաստան, 0006, Երեւան, Գարեգին Նժդեհի փող., 17 շենք, 2-րդ հարկ, 19 սենյակ
 Հեռ.՝ +374 (060) 48-94-94
 Ֆաքս՝ +374 (060) 48-94-94
 Բջջ.՝ +374 (077) 58-13-15
 Բջջ.՝ +374 (055) 48-94-94
 Էլ. Փոստ՝ news@ekhongoarmenia.am
 Վեբ կայք՝ www.exhongoarmenia.am
 «Յունիքանկ» ՓԲԸ՝ 24120004744700
 ՀՎՀՀ՝ 03810436

Հրատապ ծրագիր

Գազիկ Բաբայանը ծնվել է 17.06.1995թ.: Բժշկական հետազոտության արդյունքում Երեւանի մոտ ախտորոշվել է հետին միզուկի կափույր, երկկողմանի ուրետերեո-հիդրոնեֆրոզ, խրոնիկ երիկամային անբավարարություն, ծրագրային հեմոդիալիզին համապատասխան վիճակ: Երեւանի շտապ անհրաժեշտ է երիկամի փոխպատվաստում, որի համավճարը կազմում է 2^Գ500^Գ000 1 ^ձ3 ^Ս:

Կանխավ շնորհակալություն
«ԷԿ» ՀԿ նախագահ՝ Սերյոժա Օհանջանյան



Սյունյաց երկիր

S Y U N I A C Y E R K I R

Գլխավոր խմբագիր՝
 ԸՁ ԾՂ Գ Է Զ Է՞ ՕԸՁ ՍՍԶ Ս

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
 (091) 45 90 47,
 (077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՎԱԶՂ - ՇԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հոլումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Սյունյաց երկրի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ Օ1Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրականը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 15.11.2013թ.:

Բժիշկ-վնասվածքաբան Գեւորգ Քարամյանի նորարարությունը

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից վնասվածքաբանության մեջ ավելի ու ավելի է տեղ տրվում կոտրվածքների բուժման քիչ տրավմատիկ մեթոդներին: Հայտնի է, որ բուժման ոչ վիրահատական մեթոդների (գիպս եւ կմախքային ձգում) համեմատ կոտրվածքների վիրահատական բուժումն ունի բազմաթիվ առավելություններ: Վիրահատական բուժումը թույլ է տալիս իրականացնել բեկորների համադրում եւ կայուն ֆիքսացիա (անշարժացում)՝ տարբեր ֆիքսատորների օգնությամբ եւ հիվանդին արագ ապաքինվել՝ կանխարգելելով այն բոլոր բարդությունները, որոնք առաջանում են ոչ վիրահատական բուժման ժամանակ՝ պառկելախոցեր, կանգային երեւոյթներ շնչառական եւ սրտանոթային համակարգերում, մկանային ատրոֆիա եւ այլն:

Գոյություն ունի կոտրվածքների վիրահատության երկու տեսակ՝ բաց եւ փակ: Ներկայումս ավելի հաճախ նախընտրությունը տրվում է վիրահատության մեջ անցնելու փոքր կոտրվածքներով:



Գեւորգ Քարամյան

արվում (փաստացի սա անարյուն վիրահատություն է), կոտրվածքի շրջանը չի ենթարկվում լրացուցիչ վնասման, եւ չի խանգարվում ոսկրի արյան մատակարարումը: Սա կարելի է, որ ոսկրի սերտաճումը տեղի ունենա բնական ընթացքով: Իսկ բաց վիրահատության դեպքում, եթե խանգարվում է ոսկրի արյան մատակարարումը, սերտաճման պրոցեսը կարող է ձգձվել երկար տարիներ եւ նույնիսկ հանգեցնել հաշմանդանության:

Արտաօջախային օստեոսինթեզի պարագայում մաշկի վրա կատարվող փոքր կոտրվածքներով

ուսկրի մեջ անց են կացվում ձողեր՝ կոտրվածքից որոշ հեռավորության վրա, որոնք ֆիքսվում են ապարատի մեջ, իսկ ապարատն արտաքինից տեղադրվում է վերջույթի վրա եւ պահում ոսկրը ճիշտ դիրքով մինչեւ սերտաճումը: Այս դեպքում վիրահատությունը տեւում է մոտ մեկ ժամ եւ տեխնիկապես հեշտ իրագործելի է:

Տեղին է նշել արտաօջախային օստեոսինթեզի եւս մեկ ոչ պակաս կարեւոր առավելություն: Սերտաճման դանդաղման դեպքում կարելի է առանց ցավի ղեկավարել, կառավարել այդ օգտնու ապարատի հանգույցների օգնությամբ՝ կատարելով այսպես կոչված կոմպրեսիա եւ դիստրակցիա:

Առաջնորդվելով հիվանդին հնարավորինս քիչ վնասելու եւ արագ ոտքի կանգնեցնելու սկզբունքով, բժիշկ-վնասվածքաբան Գեւորգ Քարամյանը խորացել է արտաօջախային օստեոսինթեզի հիմունքների մեջ: 2009թ. նա ստեղծել է իր սարքը, որն արտոնագրվել է: Նոր սարքը թույլ է տվել լուծել մի շարք տեխնիկական խնդիրներ: Այս նորարարու-

թյունը հաջողությամբ կիրառվում է բժիշկ Քարամյանի կողմից, եւ առ այսօր կոտրվածք ստացած ավելի քան 90 հիվանդ սարքի օգնությամբ ապաքինվել է:

Արտաօջախային օստեոսինթեզի կիրառման բնագավառը, որպես վիրահատության փակ եղանակ, բավականին լայն է: Այս մեթոդով բուժվում են՝

- բաց եւ փակ կոտրվածքներ,
- բեկորային, ոչ բեկորային, բազմաբեկորային, հրազենային կոտրվածքներ,
- սպիրալաձեւ եւ թեք կոտրվածքներ,
- բարդացած կոտրվածքներ:

Կարող է պարադոքսալ հնչել, սակայն հիվանդն ինքը կարող է ընտրություն կատարել բուժման բաց եւ փակ վիրահատությունների միջեւ: Համախառն բժիշկն առաջարկում է այն մեթոդը, որին տիրապետում է, եւ առաջարկելով վիրահատության բաց մեթոդը, կարող է չստեղծելացնել փակ եղանակի մասին: Աշխարհում ժամանակակից բժշկությունը բավականին առաջ է գնացել փակ վիրահատության՝ արտաօջախային օստեոսինթեզի բնագավառում: Կոտրվածքով հիվանդն այդ մասին պետք է իմանա, իսկ բժիշկը պարտավոր է ներկայացնել ամբողջական տեղեկատվություն բուժման բոլոր մեթոդների մասին: